№ 137 Սեպտեմբերի 24 Հաբաթ 1883 Սեպտեմբերի 24 Հաբաթ № 137

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Նեռքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գիւղական հարց։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 22 սեպտեմբերի

Ամսիս 15-ին, «Մեղու Հայաստանի» լրագրի № 91-ի մէջ, երևաց մի թղթակցութիւն Աէէքանդրոպոլ գաւառի Քեաւթառլի գիւղից։ Թղթակցութեան նիւթն էր յայտնի Նահապետեան Պողոս վարդապետը։ Պարոն թղթակիցը պանծացնում է վարդապետի «կալուածների ներդաշնակութիւնը» և, այս կէտով, ամբողջ Երևանում (Երևանեան Նահանգում) չէ կարծում թէ գտնվէր նրա համանմանը։ Ամենայն ինչ—պարսպափակ պարտէզներ և նոցա ծոցում հոյակապ եկեղեցի և հաճելի բնակարան՝ գեղեցիկ կահաւորված և և քարտէզներով ու գրաղարանով ճոխացած, ուսումնարան, պարտէզների մէջով անցնող կարկաչոտ Ղարանղու վտակը, թանգագին ջաղացներ, վերջապէս երկրագործ բազմամարդ ընտանիքի տները, երկրագործական բոլոր յարմարութիւններով—ամենայն ինչ վայելուչ է։ «Զը նայելով որ բընութիւնը չիրակեցոց պտուղներ չէ մատակարարում, *) բայց Պողոս վարդապետի ծառերը տալիս են անմահ տանձ, կարմիր խնձոր, գեղեցիկ ծիրան, սիրուն կեռաս, չաքանակ, դամբուլ... և մինչև իսկ խաղող, որոնց տեսքով միայն անշարժ-ռամիկ չիրակեցու բերնի ջուրը գնում է ապչելուց, մինչդեռ եթէ ուզենար, այսինքն եթէ սթափվէր իր մեռելահանդոյն անշարժութիւնից և օրինակ առնէր այդ վարդապետի գործողութիւնից, ինքն ևս կունենար իր շրջակայքում նոյն պտղատու և զոնէ անտպուղ ծառերը, որոնք նոյնպէս պակաս կարեաց չեն ծառայում հողագործի համար, նա մանաւանդ ներկայումս, որ քանի գնում՝ փայտը թանգում է»։

Այսքան վկայութիւն Պողոս վարդապետի քաջագործութեան, տնտեսական հանճարի մասին տալուց յետոյ, նորա հաստատամտութեան և յարատև ջանքի, նորա մտքի և մատների այդքան գեղեցիկ գեղեցիկ արդիւնքը պանծացնելուց յետոյ, պ. թղթակիցը, կարծէք յանկարծ սթափվելով մի ակամայ արած սխալից կամ նոր գլորվելով սխալի մէջ, նոյնքան եռանդով գուն է գործում նսեմացնել վարդապետին՝ յամառ, հասարակական օգտի գաղափարից զուրկ, եսական, ինկվիզիցիական արհաւիրք և ճնշմունք գործող վերկոչութիւններով, որքան եռանդով փառաւորել էր նորան նրա փաստական օգտաւէտ արարքների նկարագրութեամբ։

Պ. թղթակցի խօսքերն են. «Որքան կարողացել եմ նրա կեանքը ուսումնասիրել, երբէք այդ յամառ անձնաւորութեան մէջ չեմ գտել ընդհանրութեան (հասարակական) գաղափար, ինչպէս այդ նշմարվում է նրա գ ո ր ծ ե ր ի ց։» Ասելով, որ նրա 25 տարվայ հիմնարկած դպրոցը ոչինչ արդիւնք չէ բերել, դրան պատճառ դնում է վարդապետի որպէս թէ միակողմանի բնութիւնը, յանձնապաստան հակումները, եսը, կամայական վարմունքը, և աւելացնում է, որ «ոչ մի զարգացած ուսուցիչ չէ ցանկանում ծառայել նրա դպրոցում», ի նկատի առնելով «նորա կամայական վարմունքը դէպի նախկին դաստիարակները, ՃԷՆանեան, Եղեկեան, հայր Ներսէս վարդապետ։»

Զը կայ մէկը, որ այս տողերը գրողին չափ ճանաչէ Պողոս վարդապետին, ի բաց առեալ միայն ինքն Պողոս վարդապետը։ Ցայս ունեմ թէ պ. Փայլակն ինքնին չնորհ կանէ ինձ, առանց նախանձութեան, այդ առաւելութիւնն ինձնից չը խլելու։ Ես ճանաչում եմ նաև հայր Ներսէս վարդապետին, որ իմ մանկութեան և ուսման ընկերն էր և այժմ էլ իմ բարեկամը. իսկ երկուսս էլ Պողոս վարդապետի բարերարեաներն ենք. ինչ որ ենք, միայն նորանով ենք եղել. կան էլի մի քանի հոգի, որոնք այս մի և նոյնը խոստովանելու են։

Պողոս վարդապետը նոցանից է, որոնք իրենց գաւառում չունին պատիւ, որոնք սակայն փառաբանվում են իրենց անցմանից յետ, ցուրտ շիրիմի ծոցում։ Լաւը առ հասարակ ուշ, շատ ուշ է ընդհանրանում։

Պ. Փայլակ հետևցնում է վարդապետի գ ո ր ծ ե ր ի ց, թէ նա ընդհանրութեան շահի դաղափարը չունի։ Ապա մի գիւղի անկիւնում այնքան յառաջադիմութիւն, այնքան բարեկերտ շինուածներ, մի խոպան և քարքարոտ գետին՝ որ այժմ «փափկահոգ-արդաւանդ թմբիկ» է «գեղեցիկ և ընդարձակ պարտէզով», այդքան «կալուածների ներդաշնակութիւն», որից եթէ ուզենար օրինակ առնել ռամիկ շիրակեցին՝ ինքն էլ բարօրութիւն կունենար, միթէ այդքանում չէ նշմարվում պ. Փայլակի փնտռած յատկութիւնը. *) միթէ անշարժ է մնում այդքան ծառայութիւն, որ Պողոս վարդապետը մատուցել է, մատուցանում է հանրութեան, որա վաղաւուրց հաւատը ցրելով և իր ձեռագործ պարտէզի անման տանձով ու կարմիր խնձորով հաստատելով թէ Շիրակի կլիման էլ է նպաստաւոր մրգաբեր ծառերի արդիւնաւէտ մշակութեան։

Ո՞վ Պողոս վարդապետից առաջ բաց արաւ Եւրոպայի ճանապարհը ուսումնասէր մանուկների առաջ։ Քսանհինգ տարի առաջ նա հիմնարկել է իր գիւղի դպրոցը. քսանից աւելի տարի կայ, որ Ռուսաստանից առաջին անդամ նա հրաւիրեց վարժապետ, ապրուստը տալով և մի քանի հարիւր ռուբլի ռոճիկ։ Իր այդ նախակրթարանից նա անձամբ տարաւ աշակերտներ Եւրոպա և այնուհետև նա քանիներին ուղարկեց։ Այդ քանում չը կայ ինչ հասարակական։ Եթէ նորա դպրոցը ծաղիկ չը տուեց, դա նորա մեղքից չէր և չէ. ասել են՝ Մի ձեռը ծափ չի տալ։ Պողոս վարդապետը մեզ Եւրոպա տարաւ. ուրիշներին էլ նոյն ճանապարհով ուղարկեց, որ յետոյ դառնանք դանք և իր հիմնարկութեան սիւները լինենք։ Պողոս վարդապետի գեղեցիկ յոյսերը մնացին գեղեցիկ երազներ։ Մենք յետ դարձանք, բայց գիւղն էլ չէր հրապուրում մեզ։ Մենք պատանիներ էինք գարնան կեանքի երազներով լի, թիթեռներ՝ ծաղիկների մէջ թռչտել ուզելով, գիւղի կեանքի չորուցամաքութիւնը, խստակեցութիւնը մեզ համար չէր, մենք փախուստ տուինք։ Այժմ Պողոս վարդապետն է մեղաւոր ամբաստանվում. մեզ արդարացնում են։ Ասեմ, որ ես, Եղեկեան, ընաւ ուսուցիչ չեմ եղել վարդապետի դպրոցում. որտեղից է առել այդ բանը պ. Փայլակ չը գիտեմ։

Եթէ Նահապետեանն այնքան հարուստ լինէր, որքան Փայլակն է կարծում, մենք կը մնայինք գիւղում և ովսաննայ կը կարդայինք վարդապետին. կունենայինք լաւ բնակարան Ղարանղուի կարկաչոտ վտակի վրա, երկնաբերձ բարդիների հովի տակ, անուշաբոյր ծաղիկների ծոցում, մրգաբեր ծառերի կողքին, ձիւնաբարձ Արագածի հանդէպ. կունենայինք նժոյգ ձի կամսիրունիկ կառք՝ կիրակի ու տօն օրերին քաղաք իջնելու համար. ծոցերս լիք կը լինէր և սրտերս բաց։ Այդ բաների ճաշակը մենք ստացել էինք, բայց Պողոս վարդապետն և իր գիւղը մեզ այդքան վայելք տալ չէին կարող։ Ահա մեր այդ ցանկութիւնների առջև Պողոս վարդապետի երազած ապարանքները փուլ էին գալիս։ Նա, երբ մեզ Փարիզ ու Վենետիկ էր տանում, կարծում էր թէ մի օր էլի կը զառնանք կը նստենք գիւղում, մեր ծննդեան տեղում, և մեր ստացածից բաժին կը հանենք մեր համագիւղացիներին։ Նա միամիտ կարծում էր, թէ մենք էլ կը զոհենք, ինչպէս ինքն էր զոհում, իր քրտինքով աշխատած ու խնայութեամբ հաւաքած դրամիկից մեզ ճանապարհի ծախս տալով, մեր զանազան պիտոյքներն հոգալով։ Բայց մենք համարեա բախտախնդրի երազներ էինք տեսնում, և ինչ բախտ կարող էր տալ մեզ գիւղը։

Այդքան յոյսերից յետոյ, այժմ անյոյս և անմխիթար նստած, այդ առաքինի մարդը էլի հալածվում է. նա ինկվիզիտոր է, նա ճնշող է, նա, նա հասարակական օգտի գաղափարը չունի...

Նոր հիմնարկելի դպրոցի անունով նշանակված 10,000 ր. գումարի առիթով, պ. Փայլակի հասկացուցածին, նորա թելադրութեան մէջ՝ մեծ

*) Պողոս վարդապետից առաջ ընդհանրապէս ընդունված էր թէ ծառի պտուղը այդ գաւառում չէ հասնում։ Ե.

*) Պողոս վարդապետի քրոջորդին, Եղեկեան Տէր-Մաղաքիա, իր քեռու չունող բնաւորութեան հետևորդ դառնալով, ջրի կարօտ մի այլ գիւղում ջրհոր է հանել մեծ ծախքով.—հանրօգուտ գործ, որի գովեստը կարդացինք սոյն լրագրում։ Վարդապետին հետևող էլի շատերը երևացել են։ Ե.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՐՑ

V.

Վերև խօսելով համ. հողատիրութեան մասին, մենք տեսանք թէ որքան վնասակար է գիւղացու տնտեսութեան համար հողերը ծախելու կամ գրաւ դնելու իրաւունքը։ Անցեալ տարվայ «Մշակի» համարներում (№ № 39 և 145) ես մանաւորապէս խօսեցայ այդպիսի դէպքերի մասին։ Գիւղական կամ քաղաքացի հարստահարող փողատէրը օգուտ քաղելով գիւղացու անելք դրութիւնից, գրեթէ չնչին վճարով վերցնում են նրա հողերը, շատ անգամ փողի տակոսի փոխարէն։ Պատահել են դէպքեր, որ գիւղացի հարուստները 10—15 բուբլի տարեկան վճարով վեր են առել չքաւոր գիւղացուց այնպիսի հողեր, որ 100—150 բուբլի եկամուտ են տալիս տարեկան։ Գուցէ ընթերցողը կը յիշէ «Մշակի» անցեալ տարվայ № 39-ի մէջ տպված նամակումս յիշված դէպքը Զ. հաս. նախկին մի տանուտէրի մասին որ որբերի հողերը վերցրել էր 18 բուբլով, այն ինչ զոքա սովորաբար տալիս են եկամուտ մինչ 300 ր. իսկ թանգութեան տարին—ինչպէս էր 1879 թիւը—դրա եկամուտը պակաս չէր 1000—1500 բուբլուց։ Ուրեմն գիւղացի հարստահարողը իւրաքանչիւր մի բուբլու փոխարէն ստանում էր մօտ 90 բուբլի վաստակ։ Բայց թողնենք այդ մանրամասնութիւնները և խօսենք հողի բարւոքման մասին։ «Ով որ տեսել է և գիտէ—ասում է պ. Կավելին—թէ ինչպէս վատ ու անհոգաբար է վարվում գիւղացին՝ աղբի, վարելահողի, խոտաքաղի, ձիու և կովի հետ, ինչպէս անհաշիւ, վարավարդով նա ցանում է, ժողովում, կալսում ու երնում է հացը, որքան այլանդակ նախապաշարմունքներ ու տգէտ մտքեր է մտցնում իր տնտեսութեան մէջ, նա բնականաբար կը հասկանայ որ գիւղացու հողատիրութեան բարւոքումը ամենամօտ հերթական հարցը պէտք է լինի։ Մանաւանդ որ գիտացող մարդիկ պնդում են թէ Ռուսիայի մէջ վնասակար միջատների աճելը՝ որոնք աւերում են բոյսերի ընձիւղները, հացերը և քաղաքաղերը, կապ ունի հողի վատ մշակելու հետ, աշնանացան հացերի մշակութիւնը գարնանայանի փոխարկելով և հողը ոչ թէ աշունքից, այլ գարունքից վարելով։ Մեր հողի աւազակաբար արդիւնաբերելը, նրանից անհաշիւ կերպով կենսական ոյժեր ծծելը՝ առանց ուրիշ կերպ նոցա վերադարձնելու—առակ են դարձել» (№ 10. էջ 715)։

Պ. Կավելինի կարծիքով գիւղատնտեսութեան թշուառ դրութեան պատճառներն են՝ գործի տեխնիկական կողմի հետ գրեթէ բոլորովին անծանօթ լինելը, կապիտալի պակասութիւնը և հողային կրէդիտի թանգութիւնը, գիւղական բերքերի առևարի, հաղորդակցութեան ճանապարհների ու բեռնակրութեան ձևերի անկանոն ու անկարգ դրութիւնը, կանոնաւոր տնտարարութեան համար ամենահարկաւոր առարկաների ու գործիքների ձեռք բերելու դժուարութիւնն ու թանգութիւնը, և այլն. բայց, նրա կարծիքով՝ գիւղատնտեսութեան անկման պատճառը միայն զոքա չեն, այլ հարկերի ծանրութիւնը, որի պատճառով գիւղացին ժամանակ չունենալով սպասելու, ստիպված էր չնչին գնով վաճառել իր ունեցածը, ստիպվեցաւ ընկնել մանր դրամատիրոջ ձեռքը, որ թէ գիւղացուց բան գնելիս և թէ ծախելիս, նշանակում է կամայական գին։ Դրանից յետոյ նա ասում է, որ գիւղատնտեսութիւնը բարելաւացնելու համար որքան և իցէ փող է հարկաւոր, ուստի նրան հարկաւոր է գոնէ չափաւոր կրէդիտ։ Սակայն գիտցուք թէ կայ մի այնպիսի գիւղացի, որի թէ հողը լաւ է, թէ փող ունի և թէ ցանկութիւն իր տնտեսութիւնը բարւոքելու։ Բայց ո՞րտեղ և ինչպէս կը սովորի նա իր անելիքը և գործը ինչպէս սկսելը։ Գիւղացու համար չը կայ մի տեղ՝ որտեղ նա կարողանար սովորել, նայել, լսել կամ կարդալ մի այնպիսի բան որ օգտաւէտ լինէր նրա կեցութեան համար։ Այն ինչ «կեանքի որ կողմն էլ որ վերցնենք—հասարակականը, տնտեսականը, մտաւորն ու բարոյականը, կը տեսնենք որ այս կամ այն բանը—համեմատաբար շատը անվում է բարձր դասակարգի համար, և համեմատաբար շատ փոքր ահագին մեծամասնութեան համար (երես 718—719)։

«Մենք ունենք—ասում է նա—գիւղատնտեսական ուսումնարաններ, մինչև անգամ ճեմարաններ, կան կառավարիչներ ու գործակատարներ պատրաստելու ուսումնարաններ, միայն չը կան ամենահասարակ, պարզ, գիւղացիների պիտոյքներին ու հասկացողութիւններին յարմարեցրած ուսումնարաններ, որտեղ 15 ամեայ և աւելի հասակով երիտասարդը, թէկուզ անգրագէտ լինէր նա—կարողանար գործնականապէս, նայելով, ծանօթանալ գիւղատնտեսական ձևերի ամենահասարակ բարւոքումների, երկրագործական գործիքների, սերմերի, եղջիւրաւոր անասունների ու ձիերի հետ։ Որքան որ պարզ, անպաճոյճ, որքան որ այժմեան գիւղական տգէտ ամբոխի հասկացողութեան մակերևոյթին մօտ լինեն այդպիսի ուսումնարանները, այժմեան եղածներից միայն մի փոքր, ամենաանհրաժեշտ բարւոքում ներկայացնելով՝ այնքան այդպիսի ուսումնարանների յաջողութիւնն ու ազդեցութիւնը աւելի ստոյգ, աւելի ապահով կը լինեն։ Այդպիսի ուսումնարաններ՝ հարիւրներով պէտք է սփռված լինեն գիւղերում, իսկ մեզանում հազիւ թէ մի այդպիսի ուսումնարան գտնվի։»

«Մենք ունենք գիւղատնտեսական ընդհանուր և մասնագիտական ագարակներ (фермы), որոնք շինված են ու կատարելագործված են հողագործութեան բոլոր կանոնների համեմատ։ Նոքա ներկայացնում են մշակութեան և լաւացրած գործիքների օրինակներ։ Գիտնական կողմից նոքա, անկարծիք, և օգտաւէտ և անհրաժեշտ են։ Սակայն գիւղացիների համար լաւ օրինակներ ունեցող ագարակներ չեն հարկաւոր, այլ հարկաւոր են այնպիսիք, որոնք հաստատ ու գործնական կերպով ապացուցանէին գիւղացուց, որ հողագործութեան լաւացրած ձևերն ու գործիքները աւելի շահաւէտ են նոցա գործածածներից։ Այդպիսի ագարակները շատ պարզ պէտք է լինեն, նոքա պէտք է ներկայացնեն տեղական գիւղացու լաւացրած տնտեսութիւն և ցոյց տան գիւղացուց, թէ ինչպէս ամենաշահաւէտ կերպով, քիչ ծախսերով պէտք է յառաջ տանել գիւղատնտեսութիւնը ներկայ տեղական պայմանների ժամանակ։ Ագա-

անբարեմտութիւն կայ. «Մեռնին կեսուրները, որ հարսների տեղը լէննայ» մաղթութեան մէջ ամբարշտութիւն կայ և կարճամտութիւն: Կարծես պ. Փայլակ ցաւում է, որ Պօղոս վարդապետը գերեզմանի մթնոտ ղռնից յետ եկաւ՝ նորից արևի լոյսը վայելելու. որովհետև, հասկացնում է նա, մահուան չեմքի վրա արված կտակը, որպէս թէ վարդապետի առողջութեան վերականգնելովը, «յօդս ցնդեցաւ»:

Պ. Փայլակ ափսոսում է, որ Պօղոս վարդապետը նորից օդ է ծծում, որովհետև՝ հակառակ դէպքում՝ նորա կտակած գրամով նոր դպրոց կը հիմնվէր, կեղրոնական: Բայց նա, վարդապետի կեանքը իր կարողացածին չափ ուսումնասիրող այդ անձը, ափսոս, որ ուսումնասիրած չէ թւում նորա շուրջը կացողներին, նորա գիւղը, հարևան գիւղերը: Վարդապետի զլուխն ի հող դրվելուց յետ, չէր անցնի մէկ տարի, երկու տարի, և պ. Փայլակ, նորից այցելութեան գնալով ներդաշնակ կալուածին, ցաւելով դուցէ և խղճահարութեամբ պատի ստուգէր, թէ ինչպէս զմայլիչ ներդաշնակութիւնը ազգական կռոցի է փոխարկվել և նոր հիմնարկեալ կեղրոնական դպրոցը դուցէ կեղրոնական ոչխարդոմի:

Բարութեան նախանձաւոր մարդը ինքնըստինքեան բախտ պիտի համարէր վարդապետի վերակենդանութիւնը, և յատկապէս աւելի բախտ՝ ակնարկեալ զումարի վերաբերմամբ, ըստ որում այժմ վարդապետը, ազատ և երկար ժամ ունենալով, լաւապէս կը կարգադրէ զումարի գործը՝ անկորուստ մնալու և շահեկան դառնալու համար:

Մի երկու խօսք էլ հասարակական կարծիքի նկատմամբ Պօղոս վարդապետի մասին: Սա առհասարակ ճանաչված է, չասենք ժլատ, գոնէ ամուր. այլապէս ասած, նա մարդաշահութիւն չունի, մարդիկ շահել չը գիտէ. և մարդ շահել, մեր դաւառացոց մտքով ասել է՝ մեր մօտ եկողին՝ ըստ ժամանակին թէյ հրամցնել, հացի կանչել, գինի խմցնել և այլ մանր մունր քաղաքավարութիւններ: Կարծիքն ուղիղ է, միայն պատուաւոր ժան անձանց համար մի լայն բացառութիւն ընդունելու պայմանով: Պօղոս վարդապետ բնութեամբ շատ ծանր է, ուղղասէր, խիստ, սակաւապէտ. իր ստուերին անգամ խրտնում են թեթեւաբարոյ, կերուխումի մարդիկ. շատի աչքում նա անտանելի է: Այդպէս, նա ոչ կերող է, ոչ արբեցող, բայց և ոչ վայրապար կերցնող և արբեցնող. ուստի և, ընդհանրի կարծիքով նա կը բ ի տ է ճանաչված (ձեռքն ամուր): Բայց եթէ նա չը լիներ այդպէս սակաւապէտ, խնայող, այդ անապատացեալ դաւառում չէր գտնվի և մի ովասիս, որ պ. Փայլակ կոչում է Կալուածների Ներդաշնակութիւն, և Ալէքսանդրօպոլի մարդասէրների և հանրութեան համար գ ա ղ ա փ ա ր ո ղ ն ե ր ի կողքին էլ չէր գտնվի առաջին մարդը, որ իր բերնէն կարելով, ժողովէր մի զումար՝ բարի և հանրօգուտ գործի համար կատակելու փայփայիկ մտքով:

Եզեկիան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Тифлисск. Объявл.» լրագիրը հաղորդում է, որ սեպտեմբերի 21-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ կայացաւ խորհուրդ քաղաքագլխի, վաճառականների, մեչչանների և արհեստաւորների գլխաւորների մէջ նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչին ընդունելու մասին:

—

Թիֆլիսի զումանը, 19-ին սեպտեմբերի իր ունեցած նիստի մէջ ընդունեց քաղաքագլխի առաջարկութիւնը Կովկասեան նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի հանդիսաւոր ընդունելութեան մասին, մի և նոյն ժամանակ միաձայն ընդունեց ձայնաւոր Նիկոլայ Զուբալովից առաջարկած հետեւեալ ռէզոլիւցիան: «Յանձնել քաղաքագլխին հանդիսաւոր կերպով դիմաւորելու Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչին:

—

Վաղը, կիրակի, սեպտեմբերի 25-ին մուտք կը գործէ Թիֆլիս քաղաքի մէջ Կովկասեան նախկին փոխարքայ Միխայիլ Նիկոլայեվիչ Մեծ Իշխանը: Թիֆլիսի ձայնաւորները հրաւէր ստացան քաղաքագլխից ներկայ գտնվելու երկաթուղու կայարանում կիրակի օր, առաւօտեան 7 ժամին: Ցայնաւորներին ձրիապէս մինչև կայարանը հասցնելու և քաղաքը յետ դարձնելու համար նշանակված կը լինեն ձիաքաշ երկաթուղու 10 հատ վագոններ, որոնք քաղաքային վարչութեան կարգադրութեամբ դասաւորված կը լինեն առաւօտեան 6¹/₄ ժամին Դվորցովայա փողոցի և Երևանեան հրապարակի վրա:

—

Յայտնի է որ հոկտեմբերի 1-ին Մցխէթի տօն է լինում: Այդ տօնին ուխտաւորների անթիւ բազմութիւն Թիֆլիսից ուղևորվում է Մցխէթ թէ երկաթուղով և թէ ձիերով: Ինչպէս յայտնի է, չը նայելով որ Մցխէթի եկեղեցին, որի տօնն է լինում հոկտեմբերի 1-ին, վրաց հին եկեղեցի է, բայց Թիֆլիսեցի ուխտաւորների մեծ մասը հայերն են լինում: Բայց զարմանալի է որ շատերը Մցխէթ գնացող հայերից չեն էլ իմանում որ Մցխէթում կայ և մի նորակառոյց հայոց եկեղեցի: Ցանկալի է որ հայերը այդ եկեղեցին էլ այցելէին ու իրանց կարողութեան չափ նիւթապէս օգնէին եկեղեցու գաւթում չինված հայոց ծխական դպրոցին էլ: Այդ դպրոցը կառուցել է տիկին Էֆէնդեան, բայց ինչպէս երևում է նա կառուցել է այդ դպրոցը միմիայն փառասիրութեան դրդմունքից դրդված, և մի և նոյն ժամանակ անիմաստ է թողել այդ դպրոցը, որտեղ, ինչպէս մենք իմացանք, ոչ մի աշակերտ չը կայ, այլ տիկին Էֆէնդեանն ինքն է վայելում դպրոցի շինութեան ընակարանը, ամառ ժամանակ իր համար ամարանոցի տեղ գործածելով այդ շինութիւնը:

—

Այսօր, շաբաթ օր, լինելու է Արծրունու թատրոնում ֆրանսիական խմբի ներկայացումն: Քանի գնում է, այդ խմբի ներկայացումները աւելի և աւելի են գրաւում հասարակութեան ուշադրութիւնը:

—

Մայրաքաղաքի լրագիրներում կարդում ենք որ Վօլկովեան գերեզմանոցը Ս. Պետերբուրգում, որտեղ պէտք է թաղվի Ցուրգենեվի մարմինը, Բէլինսկու գերեզմանի կողքին, այնքան ընդարձակ չէ, որ թաղման հանդիսին ներկայ գտնված ամբողջ հասարակութեանը թոյլ արվէր մտնել գերեզմանոցը: Այդ պատճառով գերեզմանատունը մտնելու թոյլ կը տրվի պատկ կրող իւրաքանչիւր անձի հետ միայն վեց մարդուն: Ուրիշ կողմից պատկ կրողները չեն մտնի գերեզմանոցի եկեղեցին, այլ երկու շարքերով դուրս կը կանգնեն: Իսկ եկեղեցի կը մտնեն միայն տոմսակներով:

—

Պ. Քիւրքճեան խնդրում է մեզ յայտնել որ Ռուսաստանի քաղաքներից Անիի ստէրէօսկոպիական լուսանկար ժողովածուները առնել ցանկացող անձինք այսուհետև թող հաճեն դիմել Աստրախան, սրբազան Սաքիսա եպիսկոպոսին, իսկ Անդրկովկասեան քաղաքներից ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը, որտեղ մենք ունենք արդէն չորս օրինակ Անիի աւերակների լուսանկար ժողովածուից:

—

Սեպտեմբերի 25-ին, կիրակի օր, վաղ առաւօտեանից Թիֆլիսի փողոցները զարդարված կը լինեն դրօշակներով:

—

Նորերումս մենք առիթ ունեցանք տեսնել մի բրօնզեայ հին կիսագլուխ, որ գտնվել է Լօռու դաւառի մի հին չէնքի պատի տակ: Կիսագլուխը արուեստի կատարելութեան կողմից հաղւագիւտ է և շատ հետաքրքիր իր ընդհանուր տեսքով և քանդակված զարդարանքներով: Դէմքի ամէն մի գծագրութիւնը օրինաւոր ձև, համաչափութիւն և նշանաւոր արտայայտութիւն ունի, նաև փառաւոր գանգուրագեղ մրուք, աւելի գեղաձև, քան Աստրեասանի հին արձանների վրա տեսնվածները: Գլխի մազերը ուղղակի ճակատի մէջտեղից երկու հաւասար մասերի բաժանված են, ետրօպական նորագոյն ճաշակով սանդրուածքին նման: Գեղեցիկ շրթունքներով բերանը փոքր ինչ բաց է, իսկ աչքերը կիսաբաց և խորացած են, այնպէս որ այդ գլուխը նոր մեռած մարդու դէմք է ներկայացնում, մօտաւորապէս 50 տարեկան հասակի: Այս կիսագլուխը ենթադրելի է կարծել թէ մի նշանաւոր անձի, թերևս թագաւորի կամ քուրմի դէմք է, որովհետև գլուխը զարդարված է մեծ և փոքր, դուրս ցցված, դափնեայ գեղաքանդակ տերևներից ընտիր ճաշակով հիւսված պսակով, որ եռածալ ժապաւէնի միջոցով ճակատի վերայով կապված է գլխին և ականջների տակից երևումն արտախուրակները: Բացի ժապաւէնի վրա ամրացած դափնեայ տերևներից մազերի մէջ ճակատի կողմից խրված են երկու գնտաձեղներ, իրանց ծայրերում կրելով եօթական հատ գնտակներ, ի մի գունտ ամփոփված. թերևս նրանք մարգարիտներ ներկայացնեն: Եւ իւրաքանչիւր մարգարտատեսիլ գնտաձեղի մօտից դուրս ցցված կայ մի մի հատ դարձեալ դափնեայ տերև, փոքրագոյն դիրքով, քան միւսները: Գլուխը ունի նաև զանգաթի վրա դրած լայն և հատ մի օղակ, նման Պերսեպօլիսի և այլ աւերակների մէջ տեսնված արձանաւոր մարդկանց, թագաւորների, ձեռքում բռնած օղակներին: Լօռում զտնված այդ կիսագլուխի հետ նաև գտնված են նոյն տեղում բրօնզեայ բևեռներ (մեխեր), որ հեռաւոր հնութեան մի ապացոյց է: Որքան մեզ յայտնի է նմանօրինակ կիրթ գեղարուեստական դէմքով հնութիւններ շատ հազիւ են գտնված մեզանում. նրանց նշանակութիւնը բազմակողմանի է մեր նախնեաց հնագոյն մութ անցեալի համար: Աւելն մի լուսաւորեալ մարդ կը պահանջէ որ այս տեսակ հնութիւններ ձեռք ընկած ժամանակ չը պահվէին մասնաւոր ձեռքերում, որտեղ կարող են հեշտութեամբ կորչել, անհետանալ, այլ նուիրվէին հասատաս, տեղական զոյութիւն ունեցող կենտրոնական հիմնարկութիւններին, ինչպէս օրինակ Կովկասեան Մուզէում Թիֆլիսում, կամ Ս. Էջմիածնի Թանգարանը, որպէս զի գտնված հնութիւնները պահպանվէին ապագայ սերունդի և գիտութեան համար: Որքան լսել ենք, մեր նկարագրած կիսագլխի գտնողը նուիրում է իր գիւտը Էջմիածնի թանգարանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սեպտեմբերի 20-ին Հռօմի մէջ տօնվեցաւ այդ քաղաքի առման 13-ը տարեդարձը: Ժամի 3-ին քաղաքագլուխը, քաղաքային խորհրդի անդամները և տեղական զօրքերը մի պատկ դրին Վիկտոր-Էմմանուէլ թագաւորի դաղաղի վրա: Այնուհետև նրանք ուղևորվեցան Պիոսի դռների մօտ, որտեղ հաւաքվել էր բազմաթիւ ժողովուրդ: Քաղաքագլուխը մի ճառ արտասանեց, որի մէջ, գովելով Վիկտոր Էմմանուէլ թագաւորին և իտալական զօրքերին, նա կարճառօտ պատմեց այն անցքերի վրա: Զողի վրայից քաշ են արած 5—6 կամներ: Զողի ծայրին յարմարցրած տեղում լծում են մի ձի, որ հեշտութեամբ շրջեցնում է այդ կամները: Ուրեմն գիւղացին մի ձիով անում է այն, ինչ որ առանց այդ մեքենային անելու էր վեց ձիով կամ վեց զոյգ եզներով: Այդ օրինակից պարզ է, որ գիւղացին ևս ձգտում է դէպի երկրագործական ձևերի բարւոքումը: Սակայն դառնալք մեր զրուածքին: Պ. Կավէլին ասում է որ, ոչ մի տեղ չը կան գիւղացու կարիքներին յարմար, լաւացրած սերմերի և ամենահասարակ, էժանագին, ամենակարևոր գործիքների փոքրիկ պահեստներ: Գիւղացին ոչ միայն չէ կարող գնել իրան հարկաւոր սերմերն ու գործիքները, այլ և չէ կարող տեսնել դոցա: Ուրեմն—հարցնում է նա—ինչպէս կը ծանօթանայ նոցա հետ, որտեղից կարող է նրա մտքի մէջ ընկնել այն փրկարար կատկածը թէ իր հայրերի ու պապերի գիւղատնտեսական ձևերը սնսխալական չէին: Իսկ եթէ նրա մօտին լինէր իրան օգտակար բանը՝ նա կը նայէր, կը մտածէր, իսկ այժմ նա չէ էլ մտածում թէ կարելի է աւելի լաւ գործել:

«Վերջապէս, գիւղացոց մէջ կանոնաւոր գիւղատնտեսական տեղեկութիւնների զօրեղ տարածողներ կարող էին լինել պարզ և անպաճոյճ լեզուով գրված էժանագին գրքոյկներ, նկարներով ու գծագիրներով զարդարված, որոնք կենդանի և նկատողական կերպով բացատրէին այժմեան գիւղացու տնտեսութեան և ապրուստի ամենագլխաւոր թերութիւնները ու նոցա մէջ անելու ամենահարկաւոր բարւոքումները, որոնց օգուտն ու մատչելի լինելը աչքի ընկնէին: Գրագիտաւորակների դերը կարող էին խաղալ նմանապէս փոքրիկ կապալահողեր, որոնք հասարակ գիւղացու հողերից մեծ չը լինէին և ամենաձեռնտու պայմաններով տրվէին գիւղացի լաւ տանուտէրերին, պարտաւորեցնելով նոցա, որ տնտեսութիւնը վարեն լաւացրած ձևերով ու նոյնպիսի գործիքներով:» Պ. Կավէլին յոյս ունի, որ «այդպիսի ագարակները որ և է 10—15 տարում երկու մեծ ծառայութիւններ կանէին երկրին՝ կենդանի, նկատողական և մատչելի օրինակով, նոքա սէր կը զրգռէին գիւղացոց մէջ, տեղական պայմաններին ու հանդամանքներին աւելի յարմար կերպով գիւղատնտեսութիւնը բարւոքելու:»

Դրանից յետոյ յօդուածագիրը անցնում է անասնապահութեան հարցին: «Հողագործ գիւղացու անասնապահութիւնը գտնվում է ողորմելի վիճակի մէջ և նորա բոլոր գործերի նման ոչ թէ առաջ, այլ ետ է գնում. գիւղացոց փոքր, նիհար վատոյժ ձիերը առածի նիւթ են դարձել:» Անասունների ցեղը ազնուացնելու համար—յօդուածագրի կարծիքով, օգտակար կը լինէին ամենքին մատչելի, էժանագին և մօտիկում գտնվող ախոռներում զուգաւորելու (случка) համար պահված ազնիւ ցեղի անասուններ: Ախալքալաքի գաւառում բացի անասնոց ցեղի հետզհետէ վատթարանալը, անասնապահութիւնը սակաւ առ սակաւ պակասում է: Լեռնային գիւղերում ընդարձակ արօտատեղիները դեռ նպաստաւոր են անասնապահութեանը, իսկ դաշտում, որտեղ ժողովուրդը աւելի խիտ է բնակեցրած և սակաւահողութիւնը աւելի զգալի է, անասնապահութիւնը աւելի ու աւելի դժուարացուցիչ դրութիւն է ըստանում:—Գիւղական տնտեսութիւնները բարւոքելու համար—ասում է պ. Կավէլին—հարկաւոր են աւելի լաւ սերմեր ու գործիքներ՝ քան գիւղացոց ներկայումս գործածածները: Էժանագին ու հասարակ կամերի, գութանների ու հեծանոցների հարկաւորութիւնը այնքան մեծ է, որ զանազան տեղերում իրանք գիւղացիք չինում և տարածում են շատ անգամ մինչև բաւականին հեռաւոր տեղեր:

Եւ արդարև, մեր գիւղացիք շատ անգամ 10—20 վերստ հեռուն են գնում գութան, կամ կասող մեքենայ չինել տալու, բայց ի հարկէ այստեղ խօսքը կատարելագործված գութանի մասին չէ, այլ նահապետական, նախաջրհեղեղեան, որի չինել չը կարողանալը իրաքանչիւր գիւղում, պէտք է վերագրել գիւղացոց ծուլութեանը: Իմ կարծիքով, գիւղացին մեծ յօժարութեամբ կը գնէր նոր ձևի երկրագործական գործիքներ, եթէ դրանց օգտակարութիւնը, յարմարութիւնը տեսնէր իր աչքով, իր համագիւղացուն գործածած միջոցին: Գիւղացին մի այնպիսի կարծիք ունի թէ շատ գիւրաբեկ են եւրոպական գութանները,—որոնք արդարև գիւղացու նահապետական, կոչտ չինված գութանի մօտ մի տեսակ խաղալիքներ են—իսկ կարկատողների չը լինելը արգելք է դառնում մեր երկրագործների մէջ բարւոքած գործիքների մտնելուն: Բայց, ի հարկէ, հէնց որ կը լինեն այդպիսի գործիքներ, կը յայտնվի պահանջ դոցա կարկատողների մէջ—ինչպէս արդարացի կերպով ասել էր պ. Կ. Թէմ.—(«Մշակ» 1883 թ. № 102): Մենք շատ ուրախացանք՝ երբ կարդացինք որ Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութիւնը մտադիր է երկրագործական գործիքների մի փոքր ևս բարեկներ կարելով, ժողովէր մի զումար՝ բարի և հանրօգուտ գործի համար կատակելու փայփայիկ մտքով:

Եզեկիան

մեր դաւառում կատարել, որի միջոցին գուցէ գիւղացին ծանօթանալով այդպիսի գործիքների հետ, սկսէր մացնել դոցա իր տնտեսութեան մէջ: Ես կարծում, եմ որ այդպիսի գործիքների մինչև յայժմ գիւղական տնտեսութիւնների մէջ չը մացնելու պատճառներից մինն էլ այն է որ՝ գիւղացին պարապ ժամանակ շատ ունի և ըստ մեծի մասին պարապ է անցկացնում ժամանակը՝ որի պատճառով դա դէն չունի նրա համար: Իսկ եթէ երկրագործութիւնից ազատ միջոցին՝ նա կարողանար որ և է գործով պարապել, այն ժամանակ, իրաքանչիւր բոպէն թանգ կը լինէր նրա համար, ուստի բնականաբար պէտք է աշխատէր ըստ կարելւոյն շուտ վերջացնել երկրագործական գործողութիւնները՝ և որովհետև նոր ձևի գործիքները ժամանակի մեծ խնայողութիւն կանէին նրա համար, ուստի և նոցա ընդունելը իր տընտեսութեան մէջ կը դառնար անհրաժեշտ: Վերև մենք մէջ բերինք պ. Կավէլինի խօսքերը թէ երկրագործական գործիքների պահանջը ստիպում է գիւղացոց՝ չինել այդպիսիները: Եւ որովհետև կան և գիւղացոց մէջ այնպիսի անձինք, որոնք սէր ունեն դէպի հողագործական գործիքների լաւացնելը, ուստի ժամանակ առ ժամանակ որ և է փոփոխութիւն մացնում են այդ գործիքների մէջ: Այժմ մեր դաւառի գիւղացոց հետաքրքրութիւնը գրաւած է մի գիւղացու չինած կասող մեքենան (եթէ կարելի է այդպէս անուանել): Այսպէս են պատմում դրա չինութիւնը: Կալի մէջ տեղում՝ գետնի վրա ցցված է մի հատ գերան: Այդ գերանի վրա անցկացրած է մի երկար, հատ ձող, որ հեշտութեամբ շարժվում է ցցված գերանի ա-

քը, որով լրացաւ իտալական միութիւնը, որ երկրին դանակութիւն տուեց և գրաւեց ամբողջ աշխարհի համակրութիւնը: Այդ խօսքերը ապացուցանելու համար քաղաքագլուխը յիշեց, թէ Հռոմբերտ թագաւորին ինչպէս ընդունեցին Վիէննայի մէջ: Գիտէր Հռոմը զարդարված էր և լուսաւորված:

—Ազատամիտ և հանրապետական մամուլի գրուածքները Սպանիայի դաշնակցութեան դէմ Գերմանիայի հետ, ներգործեցին կառավարութեան վրայ, այնպէս որ սպանիական կառավարութեան պաշտօնական «Correspondencia de Espana» լրագիրը հաղորդեց, թէ կառավարութիւնը իր պարտականութիւն է համարում հերքել, իբր թէ Ալֆոնս թագաւորի ճանապարհորդութիւնը Գերմանիա քաղաքական նպատակ ունի: Լրագիրը հաստատում է, որ, չը նայելով աւստրիական, գերմանական և անգլիական մամուլի տարածած լուրերին, ոչ մի նախագիծ չը կայ երկու երկրների դաշնակցութեան մասին: Լրագրի կարծիքով գերմանական մամուլը ցանկանում է, որ այդ լուրերը փաստեր դառնան, բայց սպանիական կառավարութիւնը ցանկանում է հաչտ ապրել եւրոպական բոլոր պետութիւնների հետ, կարելութեան չափ նպաստել խաղաղութեան պահպանելուն Եւրոպայի մէջ և ամրացնել Սպանիայի հանգստութիւնը ազատամիտ քաղաքականութիւնը շարունակելու համար: Միապետական մամուլը շատ գոհ է այն ընդունելութենից, որ ուներցաւ Ալֆոնս թագաւորը աւստրիական և գերմանական կայսրների մօտ:

—«Mémorial diplomatique» լրագրին գրում են, որ բոլգարական նոր մինիստրութեան նախագահ Ցանկով Գլադաստոնին Կոպենհագէն մի կիսար հեռագիր ուղարկեց, որով շնորհակալութիւն էր յայտնում լորդ Գրենվիլի պաշտպանութեան համար այն գործին, որի համար Ցանկով աշխատել է: Ցանկով յոյս է յայտնում, որ անգլիական առաջին մինիստրը չի ղանայ նպաստել Բոլգարիայի աշխատանքներին իր կատարեալ անկախութիւնը հաստատելու համար: Մի քանի օրից յետոյ բոլգարական արտաքին գործերի մինիստր Բալաբանով այդպիսի բովանդակութեան մի շրջաբերական կուղարկէ եւրոպական պետութիւններին: Այդ շրջաբերականի մէջ բոլգարական կառավարութիւնը կը պնդէ, որ անհրաժեշտ է Եւրոպայի մէջ կոնֆերենցիա կամ կոնգրես գումարել իշխանութեան կատարեալ անկախութիւնը նանաչելու համար:

—Լրագիրները հաղորդում են, որ ամբողջ Իտալիայի վրա ծանր տպաւորութիւն գործեց այն լուրը, որ Ֆրանսիական կառավարութիւնը զինաւորութիւն ունի զինորական նահանգապետ նշանակել Կօրսիկա կղզու վրա: Լրագիրների մէջ խիստ յօդուածներ տպվեցան Ֆրանսիայի թշնամական գործողութիւնների առիթով, ինչպէս կարծում են իտալացիները: Մինչև անգամ «Opinione» չափաւոր լրագիրը հաղորդում է, որ Ֆրանսիայի գործողութիւնները ոչնչով չեն արդարանում, որովհետև Իտալիայի մէջ ոչոք չէ մտածում միացնել Կօրսիկա կղզին: «Հաւասի» ընկերութիւնը թէպէտ հաղորդեց, որ այդ լուրը ճիշդ չէ, բայց երևի նա մասամբ իրաւացի է, որովհետև իտալական կառավարութիւնը հրամայեց Մեցցանոտէ գեներալին անյապաղ ուղևորվել Սարդինիա կրդզին և ամրացնել թէ Նրա և թէ Մադդալինա կղզու մի քանի մասերը:

—Անգլիայի մէջ սպասում են օրերումս միսիոներ Լօուին, որի պատճառով բանակցութիւններ կային Ֆրանսիական և անգլիական կառավարութիւնների մէջ: Լօնդոնի մէջ նրա համար պատրաստում են պաշտօնական ընդունելութիւն մի ճաշկերոյթով, որ կպտմել է Լօնդոնի միսիոներական ընկերութիւնը: Այդ ճաշկերոյթը տեղի կունենայ սեպտեմբերի 27-ին Էկզետեր-Հալլի մէջ:

—Վիէննայի «Deüt. Zeitung.» լրագիրը հաստատած է, որ բոլգարական գժուարութիւնները Եւրոպայի համար մի նոր անսպասելի դէպք են պատրաստում: Այդ լրագիրը նկատում է. «սխալ կը լինէր ենթադրել, որ շուտով վերջ կը դրվի համայն սլավոնական քաղաքականութեանը և աստրո-գերմանական ազդեցութիւնը յաղթող կը հանդիսանայ: Պէտք չէ մոռանալ, որ նոր մինիստր-նախագահը Ցանկովն է և որ նրան մի ժամանակ բոլգարական իշխանը հեռացրեց պաշտօնից նրա հակակրութեան պատճառով դէպի Աւստրիան: Բոլգարիայի մէջ ներկայումս իշխանութիւն ունեցող կուսակցութիւնը նոյն կուսակցութիւնն է, որ ցանկանում է Մեծ Բոլգարիայի կազմելը, որի առաջին և վերջին խօսքը բողոք է Բերլինի դաշնագրի դէմ և որի նախագիծն է միացնել Բոլգարիայի հետ Արևելեան-Ռումէլիա և այդպիսով կազմել բոլգարական ազգային մի պետութիւն:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վատիկանեան արխիվը: Պապը Նորերումս զէ-Լուկա, Պիարա և Դերզէնդեանէր կարդինալներին ուղղած նամակի մէջ հրաւիրում է հոգևորական և աշխարհական զինանականներին Վատիկանի գրականական գանձերի ուսումնասիրութեան միջոցով ծանօթանալ կաթոլիկ կրօնի և եկեղեցու սրբութեան և ճշմարտութեան անհերքելի ապացոյցների հետ: «Արդարև, գրում է «Figaro» լրագրի Հռոմի թղթակիցը, Վատիկանը ներկայացնում է շատ հարուստ, զանազանակերպ և մինչև այժմ չը մշակված նիւթ գիտական հետազօտութիւնների և ուսումնասիրութեան համար: Վատիկանի գրադարանը շատ անգամ արդէն ուսումնասիրված է եղել, այն ինչ վատիկանեան արխիվի գրութիւնը, Վատիկանից դուրս, շատ քիչ անձանց է յայտնի: Ինձ, վատիկանի արխիվի մէջ մուտքի իրաւունք ունեցող անձերից մէկի օգնութեամբ, յաջողվեցաւ ծանօթանալ դեռ ևս չը հրատարակված հետաքրքիր իրողութիւնների հետ. վատիկանեան արխիվը պէտք է մտնել այն դռներից, որոնք գտնվում են վատիկանեան այգու հանդէպ, Սբ. Պետրոսի եկեղեցու հետ: Այնտեղ մտնելու համար, սկզբից պէտք է անցնել այդպէս անուանված մեղուական բակը. դա այն պատճառով է այդպէս անուանվում, որ Նրա վրա կախված է Ուրբան VIII պապի նշանակը, որի վրա մեղուներ են նկարված: Նոյն բակի մէջ գտնվում է մի աղբիւր, որտեղից պապերի համար շատ լաւ ջուր են վերցնում: Առաջ արխիվը վերին յարկումն էր գտնվում, պապական պալատի այն մասում, որը «Specola» է անուանվում. այնտեղ վերև գնալու համար պէտք էր 333 աստիճաններ բարձրանալ, ապա Պիոս IX պապի հրամանով տեղափոխվեցաւ ստորին երեք յարկերում: Առաջին յարկում արխիւը զբաւում է 8 դահլիճներ, որոնք զարդարված են Բրիլլիի գեղեցիկ պատկերներով. արխիվի այդ բաժինը Աւվինիոնեան է անուանվում, որովհետև նրա մէջն է պարունակվում արխիվի այն մասը, որ վերաբերվում է պապերի Աւվինիոն մնալու ժամանակին: Աւվինիոնեան բաժինը պարունակում է իր մէջ պապերի հրովարտակները, կոնդակներ, առաքելական թղթեր և այլն Ինոկենտ III-ից մինչև ամենանոր ժամանակները: Եկրորդ յարկում արխիվը գրաւում է չորս մեծ դահլիճներ և անուանվում է del Castello-ի արխիւ, որի մէջ գտնվում են պապերի աշխարհային իշխանութեան վերաբերեալ բոլոր գոկումենտները, որոնք առաջ պահվում էին սբ. Հրեշտակի ամրոցում: Երբ որ Ֆրանսիական գեներալ Բէրտիէ 1848 թուին մտաւ Հռոմ, հրամայեց կարդինալ Մարինին, որ նա երեք օրվայ ընթացքում վերոյիշեալ արխիւը սբ. Հրեշտակի ամրոցից տեղափոխի Վատիկան: Այդ տեղափոխութեան ժամանակ զինուորական կերպով էին վարվում թղթերի հետ, զինուորները մինչև անգամ իրենց թոյլ էին տալիս թերթերը դուրս պոկել թանգագին ձեռագիրներից: Ֆրանսիական զինական Պօլ Լիւդովիկ Կուրիէի միջնորդութեան շնորհիւ գեներալ Բէրտիէ ստիպված էր թողնել Հռոմում այդ գանձերը և ֆրանսիական պօլիցիան ստիպեց զինուորներին վերադարձնել իրենց յափշտակած և դեռ ևս չը ոչնչացրած գրքերը: Արխիվի երրորդ յարկում, որը անուանվում է դեսպանների դահլիճ, գտնվում է պապի դեսպանների թղթակցութիւնը զանազան կառավարութեան հետ: Վերջապէս, արխիվում կայ էլի մէկ բաժին, որը պարունակում մինչև այժմ դեռ անյայտ և չը դասաւորված հեղինակութիւններ. ասում են որ այնտեղ է գտնվում Դանտէի «Աստվածային կոմեդիայի» ձեռագիրը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՍՕՖԻԱ, 22 սեպտեմբերի: Բոլգարական ժողովը վճռեց զինուորական վարչութիւնը երկու մասի բաժանել՝ տնտեսական և զինուորական: Առաջին մասը կը կառավարէ պատերազմական մինիստրը, իսկ երկրորդը իշխանը առանձին շտաբի հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի: Արտաքին գործերի մինիստրութեան իրաւասութեան տակ արևելեան լեզուների կուրսեր են նշանակված դվարդիայի պօրուչիկի և արմիայի շտաբս-կապիտանի աստիճանից ոչ բարձր օֆիցերների համար: Կուրսերը վերջացնելուց յետոյ այդ օֆիցերները պարտաւոր են գոնէ երեք տարի ծառայել ասիական զինուորական շրջանների մէջ:

ԲԵՐԼԻՆ, 22 սեպտեմբերի: Այստեղ բերվեցաւ Տուրգենեվի մարմինը: Սգի ոչինչ հանդէս չը կար:

ԲԷԼԳՐԱԴ, 22 սեպտեմբերի: Սկուպչինայի նիստերը փակվեցան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 սեպտեմբերի: „Южный Край“ լրագրին Նովոմոսկովսկից հաղորդած լուրը՝ տիկին Խլիաշենկոի կալուածքի կառավարչի սպանութեան մասին պաշտօնապէս հերքվում է: Տուրգենեվի մարմինը այսօր կը բերվի Վերժբոլովո, ուր երեկ ճանապարհ ընկաւ Ստասիւլեվիչ, որը ընտրված է թաղման յանձնաժողովից մարմինը ընդունելու և ուղեկցելու համար մինչև Ս. Պետերբուրգ: Թաղումը կը կատարվի սեպտեմբերի 27-ին: Ռուսաց արդիւնաբերութեան և առևտրին նպաստող ընկերութիւնը Նիժեգորոդեան տօնավաճառային առևտրականների ներկայացուցիչներից մի գրութիւն է ստացել՝ Ֆինանսների մինիստրութեան մէջ առևտրական, գործարանական և գործարանական արդիւնաբերութեան առանձին ներկայացուցչութիւն հիմնելու մասին: Հոկտեմբերի 1-ից ամեն ամիս կը հրատարակվեն Ս. Պետերբուրգի սլավոնական բարեգործական ընկերութեան տեղեկութիւնները:

ՕՐԷՕԼ, 23 սեպտեմբերի: Դուման վճռեց միջնորդել՝ կայսերութեան ամեն տեղերում նուիրատուութիւններ հաւաքելու թոյլտուութեան մասին Տուրգենեվի արձանը կանգնեցնելու համար Օրէօլում, որ հանգուցեալի ծննդեան տեղն է:

ՓԱՐԻԶ, 23 սեպտեմբերի: Զինուորական մինիստր գեներալ Ֆիրոդէն հրաժարական տուեց, որը և ընդունեց հանրապետութեան նախագահ Գրէվի:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

թիւնը մեր հասարակ ժողովրդի մէջ ահագին յառաջադիմութիւններ է անում, ընթերցանութեան հաչակը սակաւ առ սակաւ զարգանում է ոչ միայն գրագէտների, այլ և անգրագէտների մէջ, որոնցից ոմանք յօժարութեամբ լսում են ուրիշների կարդացած միջոցին: Բայց այդ կողմից էլ ոչինչ չէ արած գիւղացոց համար: Մենք աւելի սիրում ենք գիւղատնտեսական բարձր հաշիւներ անել և չենք մտածում որ մեզանում ամբողջ միլիոնաւոր տնտուտէրեր գիւղատնտեսութեան այլուրեկն անգամ չը գիտեն, որ նոցա համար, ինչպէս երկնային մանանայ՝ հարկաւոր են գիւղատնտեսական ամենատարրական տեղեկութիւններ, որոնց նոցա անկարող են մի տեղից քաղել: Մեզանից շատ քչերը գիտեն, որ մի գրքոյկ տպել տալը ու ծախս հանելը դեռ բոլորովին չէ նշանակում ամբիկներին հասցնել այդ գիրքը: Նոցա համար գրված գրքոյկները գրեթէ չեն հասնում նոցա ձեռքը և բացի դրանից հազիւ են գտնվում գիւղացոց համար գրել կարողացողներ:» (Էջ 721—723 № 10): Յօդուածագրի կարծիքով, այդպիսի մի ձեռնարկութիւն յաջողութեամբ կարող էր յառաջանալ կառավարութիւնը: Թէպէտ վերոյիշեալ պայմանները գիւղացու տնտեսութեան բարդման մասին՝ նա ասում է. «Սկզբից կանոնաւորենք ինչպէս պէտքն է գիւղացոց տնտեսութիւնը, հաշուառութիւնը, թեթևացնենք նոցա հարկերն ու տուրքերը, որոնք չեն թողնում նրան ապատնչելու: Այն էլ ահագին յաջողութիւն կը լինի, եթէ այդպիսի միջոցների շնորհիւ կը կարողանան գիւղացիք գործադրել գոնէ այն հասկացած ու գիտցածները գիւղատնտեսութեան և դաշտավարութեան մասին, որ սովորել էին իրանց հօրերից ու պապերից: Յետոյ դիւրացնենք նոցա համար միջոցը՝ կանոնաւոր տնապահութեան ձեւերի ու պայմանների հետ ծանօթանալու և իրանց գիտցածը հողի վրա իրօք գործադրելու համար: Այն ժամանակ իրանք գիւղացիք մեր կարծածից աւելի շուտ կանցնէին բազմաղաշտանի ձևին և խոտացանութեանը, կատարելագործած գործիքներին, անասունների ու ձիերի բազմացնելուն և ամրացնելուն:» (Էջ 723): Յօդուածագրի կարծիքով միասակար են այդպիսի դէպքերում ստիպողական միջոցները, որոնք միայն արգելք կը դառնային: «Այսպիսի ծանր և բարդ հարցի մէջ օրէնսդրութիւնը առանց առաջ վազելու պէտք է հետևի դրա բնական զարգացմանը և միայն պէտք է օգնէ նրան՝ ճանապարհները մաքրելով»:

VI.

Գիւղացոց դրութեան բարւոքման համար մի քանի այլ միջոցներ ցոյց տալուց առաջ պ. Կավէլին ասում է. «Գիւղացիք մի առած ունեն թէ՝ «գիւղացին մի կով է, անցնողը կը կթէ նրան:» Հարկաւոր է ճանաչել գիւղը և մօտիկից տեսնել գիւղացու կեանքն ու ապրուստը—գիւղացու իր վրա արած դառն երգիծանքի ախուր նշանակութիւնը լիապէս հասկանալու համար: Միայն ծոյլը չէ չահվում նորանից: Օրէնքով նշանակված յայտնի վճարվող հարկերը, տուրքերը և պարտաւորութիւնները, ծառայութիւններն ու աշխատանքները ինքն ըստ ինքեան բաւական ծանր բեռ են կազմում նրա նուազ միջոցների համար, մանաւանդ եթէ հաշուենք, որ ուղղակի հարկերից ՝ի զատ, նա վճարում է կողմնակի հարկերն, որոնք առհասարակ չեն հաշվում, բայց նոցա պէտք է կրէ գիւղացին կամայ թէ ակամայ: Գիւղացին շատ անգամ կարիքից ստիպված գրնում է աշխատելու, պէտք է անցաթուղթ առնէ և փող վճարէ, ընկաւ գիւղացի գատարան ոչ թէ ստութեան, այլ ճշմարտութեան համար, դարձեալ պէտք է վճարէ ու վճարէ: *) Այդ բոլոր ծախսերը ծածկելու համար նա երկու աղբիւր ունի, այն է՝ իր բերքերի ծախքը և անձնական աշխատանքը: Սակայն կարիքի և գիւղացու չար բաղդի պատճառով, այդ աղբիւրներից նրա ստացած եկամուտները շատ անգամ բաւական նուազ են լինում: Հարկաւոր է արդեօք ասել որ՝ պ. Կավէլինի ասածների մէջ բոլորովին չափազանցութիւն չը կայ: Նոյն դէպքերը, նոյն երևոյթները տեսնում ենք և մեզանում: Պ. Կավէլին ասում է, որ գիւղացոց հարկաւորութեանը օգնելու և խնայողութիւն սովորեցնելու համար, հիմնված են փոխատուխնայողական ընկերութիւններ, որոնք երկու տեսակ օգուտ են տալիս գիւղացոց, այն է՝ փող ունեցողները շահաւէտ կերպով տեղաւորում են իրանց դումարները, իսկ հարկաւորութիւն ունեցողները չափաւոր ու ձեռնտու պայմաններով փոխառութիւն են անում կարճ ժամանակամիջոցով, միայն դա շատ անգամ ապարդիւն է լինում, որովհետև գիւղացիք շատ խեղճ լինելու պատճառով, անկարող են լինում իր ժամանակին վերադարձնել փոխառութիւնը, ուստի դրա աւելի շահաւէտ են առնտրով պարապողների համար, քան թէ գիւղացոց համար: «Իսկ ով որ ծայրը ծայրին է հասցնում, ով որ հարուստ է հաշվում, երբ մի տարուց միւսը առանց պարտքի իր հացովն է անցնում, ով որ ձրմուը փոխ է վերցնում՝ աշնանը վճարելու համար—երբ նոր հացը կամ հողի նոր արդիւնաբերութիւնը կը ծախէ, այդ բոլոր մարդիկը՝ այսինքն՝ հողագործների ահագին մեծամասնութիւնը, փող չունեն յետաձգած և չեն կարող վճառականական ժամանակաւոր փոխառութիւնների տակ մտնել: Նրանց հարկաւոր է օգնութիւն արտաքուստ, առհասարակ փոքր քանակութեամբ՝ միայն ժամանակին յարմար և գոնէ տնտեսութեան տարեկան շրջաբերութեան չափով և յետաձգել փոխառութեան վերադարձնելը, անպտղաբերութեան, հրդեհի կամ նոցա սովորական ապրուստի միաձև ընթացքը խանգարող դէպքերում: Առանց այդպիսի ժամանակատվութեան, փոխառութիւնը հողագործ գիւղացու համար փրկարար նեցուկ և օժանդակող չի դառնայ, այլ նրան կը հարկադրէ պարտքը վճարելու համար տկարացնել իր տնտեսութիւնը» (Էջ 728): Վերջին ժամանակ մեզանում ևս հարց բարձրացաւ գիւղացիներին վաշխառուների հարստահարութիւնից ազատելու համար՝, հիմնել գիւղերում կրէդիտային հիմնարկութիւններ, բայց ցաւալին այն է, որ այդպիսի մի նախաձեռնութիւն ոչ մի կողմից դեռ չէ եղած:

(Կը շարունակվի)

*) Գիւղացիների հոգևոր տուրքերը, բացի Էջմիածնի համար հաւաքվածները, այս կերպով են վճարվում մեր գիւղերում (գուցէ կան և բացառութիւններ): Պատարագի համար 20 կոպ. մը-կրտութիւն—20 կ. թաղումը—անորոշ, պսակի համար քահանային անորոշ, իսկ գործակատարին թոյլտուութեան համար—եթէ բարեհոգի մէկն է—աջահամբոյր մինչև 200 բուբլի: Խ. Մ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրբ Նշան եկեղեցւոյ անուամբ բացվում է Հայ օրիորդաց Ծխական ուսումնարան, որ կը լինի „Հայուհեաց Բարեգործական ընկերութեան“ հսկողութեան տակ։

Յանկացողք տալ իրանց աղջկանց այդ ուսումնարանը կարող են դիմել տ. Սրբուհի Երիցեանին, Անչիխատի փողոց, սեպհական տանը, ամենայն օր, ժամը երկուսից յետոյ։

1—3

ԳՈՒՆԻԲԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա, սեպտեմբերի 25-ից, բացվում է ամենանոր **ԱՇԽԱՐԱՀԱՆԴԷՍ** ՆՈՅԱ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԱԴԱՐՈՒԹԵԱՆ, որ կատարվեցաւ այս 1883 թուի մայիսի 15-ին։

Պանօրամայի կառավարիչ ԼԻՏՕՎՍԿԻ։

1—1

Վրաստանի և Իմէրեթի Հայոց վիճակային առաջնորդ սրբազան Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանի թոյլտուութեամբ ներկայ

սեպտեմբերի 15-ից

բացվում է

„ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ“

Վանաց Աւագ եկեղեցւոյ հովանաւորութեամբ և նոյն եկեղեցւոյ հանդէպ № 5.

Մանուկների ընդունելութիւնը շարունակվելու է մինչև առաջիկայ հոկտեմբերի 1-ը։

Օր. Մարիամ Մամիկոնեանց։

5—5

Ներկայ դպրոցական տարուայ սկզբից Շամքոռեցւոյ եկեղեցւոյ Ծխական դպրոցը ժամանակաւորապէս տեղափոխված է պ. Ց. Տէր Ղազարեանի տանը Հալաբարի հրապարակի մօտ՝ Արխանգելսկի փողոցի վրայ № 10։ Աշակերտների ընդունելութիւնը կը տևի մինչև ամսոյս վերջը։

Ուս. դպրոցի՝ Գ. Մաթինեանց

4—5

Խնդրում եմ այն պարոններին, որոնք յանձն են առել անցեալ տարի վաճառելու դաւառներում պ. Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ „ԱՆԱՀԻՏ“ անունով գիրքը, թող բարեհաճեն, մինչև ներկայ տարվայ հոկտեմբերի վերջը ուղարկել դրամները կամ մնացած անվաճառ գրքերը իմ հասցէով՝

Տպարանատէր Մ. Վարդանեանց։

2—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Հետևեալ մէկ արարուածով կատակերգութիւնները.

Էլ չարէս ինչ կամ երկու սիրահար	35 կ.
Մօդա	40 »
Կռուապատճառը ես էի	55 »
Խէչոյի թուղը	35 »
Սէր կամ մահ	35 »

Դիմել. ЭРИВАНЬ, Эмину Теръ-Григорянцу.

3—10

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Գ. Մ. ԼԷԲԷԴԻՆՍԿԻ

Տեղափոխվեց Սօլօլակայա փողոց, Սպանդարեանի տունը № 12, կալուածական բանկի դիմաց։

1—10 (2)

ԵՐԿԱԹԷ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ



Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ռ., մահիճներ ծովային խոտով լցված 6—9 ռ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։ Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներ և երկաթէ ԳՐԻԶՆԵՐ, կողպէքներ, թերիվ, տաղամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ, մատուցարաններ, ԿԼԷՕՆԿԱ, ռէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբոմներ, կոնֆեկտներ, թէյ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։

91—100

ԱՌԱՋԻՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՎԱՐԱՆՑՕՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԷՊ)

ՀԻՒԱՆԴՆԵՐԸ ԱՄԵՆ ՕՐ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ։

Ունի սենեակներ հիւանդների և ծնընդկանների համար, օրական 2-ից մինչև 4 մանէթ և ամսական 50-ից մինչև 100 մանէթ վարձով։ Երթևեկ հիւանդները վճարում են խորհրդի համար 50 կ.։ Հիւանդանոցի բոլոր բժիշկների համախորհրդի (կոնսիլիում) համար 3 մանէթ, չքաւորները անվճար։

Հիւանդները ամեն օր ընդունվում են.

Առաւօտեան՝ 9—12 ժամ, ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—վիրաբուժական, վեներական և ատամի ցաւերի համար։

10—10½ ժ. ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—մանկական և ներքին ցաւերի։

11—1 ժ. կին-բժիշկ ՍԱՐՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—կանանց, և երեխայոց ցաւերի։

10—11 ժ. (կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ) ՐԷՑԻ—աչքացաւի։

11½—12½ ժ. (երկուշաբթի), ԲԱԲԱՑԵԱՆ—ներքին և ջղային ցաւերի։

Երեկոյեան՝ 5½—6½ ժ.—ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—ամեն օր։

ՍԱՐՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—երեքշաբթի և հինգշաբթի։

ԲԱԲԱՑԵԱՆ և ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—չորեքշաբթի և շաբաթ։

Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկների)—չորեքշաբթի և շաբաթ—6½—7½ ժամը երեկոյեան։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ (բնակում է նոյն հիւանդանոցում։)

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ ցանկանում է **ԴԱՍԵՐ** ուսնեալ **ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ** դասընթացքի **ԲՈԼՈՐ** առարկաներից կամ **ԿՕՐԵԿՏՈՒՐԱԿԱՆ** աշխատանք ռուսաց լեզուի։ Հասցէն, **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ**։

9—10



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Րիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ . .	6— 8	6—11 երեկ.	Գօրի . . .	10—56	11— „
Միխայլօվօ.	6—23	6—33	Միխայլօվօ.	12—26	12—46
Գօրի . . .	7—53	8— 2	Սուրամ . .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Րիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ. .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվօ.	1—50	2— 5	Գօրի. . . .	6—30 երեկ.	6—41
Գօրի. . . .	4— 6	4—30	Միխայլօվօ.	8—41	8—56
Թիֆլիս. . .	8—առաւ.	—	Սուրամ. .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ և ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . . .	—	8—45 առ.	Սամտրեդի.	—	7—30 երեկ.
Սամտրեդի.	11—39 առ.	—	Փօթի. . . .	10—24 երեկ.	—

ԼԱՎԱԳՈՅԻ ԱՊԱԿԻՆԵՐ

„ԱԼԷՔՍԱՆԴՐԳԻՒՏԷ“

Ապակէ գործարանից ծախվում են մեծ քանակութեամբ էժան գներով։ **ՍԻՄԵՈՆ ՍԻ և ՀԱԼՍԿԷԻ** գրասենեակ։

3—5 (2)

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՋԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻԲ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ռ., դիվաններ 12—25 ռ., կաչելի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Ջեմոդաններ 2 ռ. 75 կ.—26 ռ., սակավայժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ռ. 50 կ.—30 ռ.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուլթոներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ռ., երես լուանալու պղնձէ և ժեսաի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՑԵԼԻՆԵՐ 9 ռ., տուալէտի հայելիներ 2 ռ. 40 կ.—13 ռ., զանազան մետալների մոմակալներ 1 ռ.—15 ռ., սեղանի դգալներ 4 ռ. 50 կ. և թանդ, թէյի դգալներ ֆրաժէի, մելխիորի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղներ 2 ռ.—26 ռ.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ռ. 50 կ.—35 ռ., պատրոններ ռէվոլվերների համար, հրացան 6 ռ. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ռ. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. թէյ Պոպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմբերեղէն էյնեմի, ՐԷՅՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապոն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, գինուորական զամբի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիտներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. **М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.**

50—100

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Сентября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.